



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ՀՈԳԵՒՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԵՒ Ս. ՊԱՏԱՐԱԳ Ս. ՂԵՒՆԴԵԱՆՑ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ**

Սրբոց Ղեւնդեանց Զահանայից Տօնին, որ տօնն է նաեւ Հայ Զահանայութեան, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի նախագահութեամբ եւ մասնակցութեամբ Թեմիս միաբան հայրերուն եւ քահանայից դասուն, այս տարի հոգեւորականաց համագումարը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 9 Փետրուար 2010-ին, Ազգ. Առաջնորդարանէ ներս: Համագումարին հիւրաբար ներկայ էր նաեւ Ս. Աթոռոյս երեց միաբաններէն եւ Թեմիս նախկին առաջնորդներէն՝ Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապագեան:

Համագումարը ընդգրկեց առաւօտեան ժամերգութիւն, նախատօնակ եւ հոգեւոր խորհրդածութիւն, նիւթ ունենալով Բ. Թեսաղոնիկեցիս 3-րդ գլուխը, ուր յորդոր կը տրուի աղօթելու եւ աշխատելու, ինչպէս նաեւ քահանայութեան պաշտօնը լուսարձակի տակ կ'առնուի:

Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ, Հոգշ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան, խօսեցաւ »Զահանայական Կոչումի« նիւթին շուրջ: Հայր Սուրբը կարելոր ութը կետեր նշեց, վեր բերելով Զրիստոսի օրինակով ճշմարիտ հովիւի կոչումին, նկարագրին եւ առաքելութեան հետ առնչուող Էական յատկանիշները:

Համագումարը ընդհանրապէս զբաղեցաւ քահանայական պաշտօնի եւ առաքելութեան վերարժեւորման հրամայականներով, ինքնաքննութեան անկեղծ փորձերով լուսարձակի տակ առաւ հովուական, ծիսական-արարողական թէ վարչական պատասխանատուութեանց եւ պարտականութիւններու հոգեւոր դաստիարակչական բնագաւառները:

Նկատի ունենալով որ 2010 տարին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի կողմէ հռչակուած է «Հայ Կնոջ Տարի», համագումարը այդ ուղղութեամբ համապատասխան ժողովրդային ու դաստիարակչական բնոյթի ծրագիրներ մշակեց, թելադրելով ծիսական շրջաններու Հովիւներուն, որ յատկապէս Մեծ Պահոց շրջանին, անդրադառնան սուրբ գրային տիպարներու, ինչպէս նաեւ Վարք Սրբոցի սրբուհիներուն կեանքին, եւ տարուան ընթացքին կազմակերպեն լսարանային եւ դասախօսական դաստիարակչական բնոյթով երեկոյթներ: Այս եւ այլ ծրագիրներու մասին յետագային մամուլով մեր ժողովուրդը տեղեակ պիտի պահենք:

Երեկոյեան Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Ս. Ղեւոնդեանց քահանայից նուիրուած Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցուեցաւ: Պատարագեց եւ յաւուր պատշաճի քարոզեց, Հոգշ. Տ. Վաղինակ Վրդ. Մելոյեան:

Յաւարտ Ս. Պատարագին, հանդիսապետութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր, հոգեհանգիստ կատարուեցաւ Հիւս. Ամերիկայի մէջ ծառայած հոգելոյս եկեղեցականներու ու Արեւմտեան մեր Թեմին ծառայած ու այժմ հանգուցեալ բոլոր եկեղեցականներու հոգւոց խաղաղութեան եւ լուսաւորութեան համար:

Սրբոց Ղեւոնդեանց քահանայից տօնը եզրափակուեցաւ Վարդանանց եւ Ղեւոնդեանց նուիրուած հայրենասիրական երգերու երգեցողութեամբ, որուն իրենց մասնակցութիւնը բերին դպրաց դասն ու հաւատացեալ ժողովուրդը:

## **CLERGY CONFERENCE AND DIVINE LITURGY ON THE FEAST OF STS. GHEVONTIANK**

The annual clergy conference on the occasion of Sts. Ghevontiank took place on Tuesday, February 9<sup>th</sup>, at the Prelacy “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall, presided over by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of the clergy order. Former Prelate H.E. Archbishop Yeprem Tabakian also participated.

The day began with morning services at the Chapel, followed by lectures and spiritual meditations. Speaking on the topic “The Calling of Clergy”, Pastor of St. Gregory Church of San Francisco Very Rev. Fr. Vaghinag Meloian lectured on the characteristics of being a good shepherd in the example of Jesus Christ.

The conference discussions largely focused on the responsibilities and mission of clergy members, from pastoral duties to administrative.

In celebration of the “Year of the Armenian Woman” proclaimed by H.H. Catholicos Aram I, a number of educational and cultural events were drafted and clergy members were encouraged to organize events in their local parishes exalting the lives and virtues of women in the Bible and our saints.

In the evening, Divine Liturgy was celebrated at St. Mary’s Church in Glendale. The celebrant was Very Rev. Fr. Vaghinag Meloian.

At the conclusion of the service, the Prelate presided over requiem for departed clergy members. The evening concluded with the singing of songs dedicated to the Feasts of Sts. Ghevontiank and Vartanank.